534

1. Այս կարճ կյանքի մեջ ինձ համոզեցիր,
Որ Սեր ես անհուն, օրհնյալ Քրիստոս,
Եվ Քո կամքով էր, որ ինձ ընտրեցիր
Որպես Քեզ եղբայր, լուսե Քրիստոս:
Բարձրյալի Որդի, ինձ համոզեցիր,
Որ միայն Դու ես իմ Բարեկամը,
Առաջին օրից քիմքիս թողեցիր
Քաղցր խոսքերիդ մեղրաբույր համը:

2. Աստծո Որդի, ինձ համոզեցիր,
Որ միայն Դու ես տերերի Տերը,
Խավար սրտիս մեջ լույսդ վառեցիր
Ու ինձ ասացիր՝ հենց ես եմ Սերը:
Իմ խաչյալ Հիսո՛ւս, ինձ համոզեցիր
Անցնող աշխարհի ունայնությունը,
Մեղքերս առար, խաչիդ գամեցիր՝
Քեզ հետ բերելով մեծ հաղթությունը:

3. Հարուցյալ Հիսո՛ւս, ինձ համոզեցիր,
Որ միայն Դու ես ճամփան ու կյանքը,
Հոգովդ իմ մեջ նոր սիրտ դրեցիր՝
Դարձնելով ինձ Աստծո ժառանգը:
Ո՜վ իմ Սուրբ Հիսո՛ւս, ինձ համոզեցիր,
Որ Դու ես, Դու ես հացը երկնային,
Հոգովդ հոգուս աչքը բացեցիր,
Որ տեսնի փառքը Քո աստվածային:

4. Թանկագին իմ Տե՛ր, ինձ համոզեցիր,
Որ ես առանց Քեզ ապրել չեմ կարող,
Քեզանով վառվող այսօրվա լույսս
Առանց Քեզ մի խեղճ ճրագ է մարող:
Հիմա էլ կրկին ինձ համոզում ես,
Որ Դու իմ Հայրն ես ու Պահապանս,
Միշտ համոզում ես ու միշտ ուզում ես,
Որ մնամ Քո մեջ, իմ սուրբ Տապանս: